## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«15» նոյեմբերի, 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Առաքելյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻԾ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված **փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է պատի ամրացման համակարգի մասին տեղեկատվությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 19-ին ժամը՝ 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

-մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 16-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:*

*Գնահատող հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Ավագյան (ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Հ. Ստեփանյան (ստորագրություն)

Կ. Մելքոնյան (ստորագրություն)

Ա. Ալիխանյան (ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան (ստորագրություն)

***Գնումները համակարգող՝***

Օ. Ասատրյան (ստորագրություն)